ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

# ԽԱԹԱԲԱԼԱ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1909 Շաբաթ, Յոկտեմբերի 17-ին. Թիֆլիս. №42.

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԹԱՏՐՈՆԻ ՀԱՄԱՐ



Худож.-Лит. С. Быхова, Тифлис.

1. Մամուլը եւ հասարակաց կարծիքը.—Հայ թատրոնը վախճանական օրի է հասել, պէտք է օգնել։
2. Իվան Խալատուրով.—Ես կարող եմ յայտարարութիւնը ձրի տպել։
3. Համ. Առաքելեան.—Ես կը գովեմ ներկայացումները։
4. Ջաքար.—Ես աֆիշաներ կը կազմեմ։
5. Դրամ. Ընկ. վարչ. անդամներ.—Ներկայացման օրը մենք և մերոնք կը գանք ու կընստենք լօժայում

Սատիր.—Եւ այսպէս կարելի է, որ հայ թատրոնը վերաշինուի։

## ՄԵՐ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ԹԼՊԱՏՈՒԹԻՒՆԸ



Դաշնակցականները Թուրքիայում միացան երիտասարդ Թուրք կօմիտէի հետ և այսուհետև Օսման-Դաշնակցական պիտ կոչուին։
(Լրագրներից)



—...Բայց ոչ ոք չի կարող հաւատալ, որ այն շլեապան ինքս եմ գնել։
—Ինչ կայ որ՝ ասա այդ դէպքում որ շլեապէն ծառի վրայ ես գտել։

## ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ



—Իսկապէս որ ժամանակները փոխուել են, այժմ նոյն իսկ դուք էլ ինձ չէք հասկանում։
—Հասկանում ենք, բայց այլևս անկարող ենք, մենք բոլորովին ուժասպառ ենք եղել։

## Ն Ո Ր  Մ Օ Դ Ա



Սպասւում է այսպիսի մօդային նորութիւն։

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

1909 թ.

Տարի 4 ԽԱԹԱԲԱԼԱ 4 Տարի

Երգիծաբանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի

ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ԱՄԵՆ ՇԱԲԱԹ ԱՆԽԱՓԱՆ

Պաշտօնական օրգան բոլոր հայ և օտարազգի գործիչների, որոնք արժանի են ծաղրանկարելու, քննադատելու, ծաղրի և ծիծաղի։

«Խաթաբալայի» բաժանորդները, այլև երդուեալ ընթերցողները ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԱԾ ԵՆ

ամէն տեսակ պատուհասներից և խայտառակութիւններից

Խմբագրութիւնը բաց է՝ երբ փակ չէ, եւ գտնւում է Մօսկովսկայեա փ. № 19

Յայտարարութիւններ ամէն լեզուներով և խիստ մատչելի գներով։ Մահացուցակները մուքթա։

Մեր ընթերցողներին ձան ենք ածում սեփական աէրօպլաններով։ Բազմաչխատ գործակալներին և «Խաթաբալայի» պրոպագանդիստ տարածողներին «Խաթաբալան» ուղարկում ենք ձրի։

Խմբագրին կարող է տեսնել ամ որ աչք ունի և քոռ չէ՝ տանը քնած ժամանակ, խմբագրատանը անժամանակ և փողոցներում բոլոր ժամանակ։ Առանձին ընդունելութիւններ չի ունենում. իսկ գաղտնի խօսք ունեցողներից խուսափում է։ Նիւթեր, յօդուածներ, ոտանաւորներ, յայտարարութիւններ և այլն մենք էլ ենք ընդունում փոստով էլ, միայն ճանապարհածախսը ձերն է. առանց մարկայի նամակներ „սկզբունքով" չենք ընդունում։ Յօդուածների համար վճարում ենք, եթէ արժան ենք համարում. իսկ անարժանների համար փող էլ որ տան, չենք տպիլ։



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է

| | | |
|---|---|---|
| Տարեկան Թիֆլիզում | 4 ր. դուրսը | 5 ր. |
| Կէս տարուանը . . . . | 2 ր. . . . | 3 ր. |
| Երեք ամսուանը . . . | 1 ր. 50 կ. | |
| Ամիսը . . . . . . . . . . . | 50 կ. | |

Մեր հասցէն՝ Тифлисъ, Редакція „Хатабала".

Արտասահմանից՝ Tiflis (Caucase) Re'daction „Khathabala".

Խմբ. հրատարակող՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ

**Հոկտեմբերի 1-ից մինչև տարւայ վերջը «Խաթաբալան» արժէ 1 րուբլի 50 կոպէկ։**

---

Ա Զ Դ

Մեր գաւառական բաժանորդներից շատերը ուղարկել են մեզ 4-ական րուբլի բաժանորդագին, փոխանակ 5 րուբլու։

Ներկայիս կրկին խնդրում ենք նրանցից, որոնք մնացած 1-ական րուբլին դեռևս չեն հասցրել՝ ուղարկեն այժմ դրամով կամ պօստային մարկաներով—որպէսզի առաջիկայ նոյեմբերից թերթի առաքումը չը դադարեցնենք։

---

## ԷՋՄԻԱԾԻՆ

IV

Էջմիածնում մէ պլան էլ կայ. մէ ինչ վուր լիճ էլ, մէշա էլ կայ, գրադարան էլ թանգարան էլ, փուռն էլ ու սեղանատուն էլ. էստի է վանական կառավարութինը, էստի է տպարանը։

Պլան վուր իմացաք, դուք էլ կուգիդենայիք, թէ էն պլանն է, վուր ամեն բան չափած ու ձևած է ինչինեբնեբէմէն։

Էտ բաներուն չուտաք, ինչիներներուն էլ ի սէր Աստծու միք ուտա. գուզիք ինձ էլ միք ուտա, թէ իս էլ ինչիներներու հանգի ձիգ խափիմ, համա ուրիշը վուր ուրիշ բան ասէ, իս խօ չիմ կանայ էն չասի, ինչ վուր կայ ու էլած է։

Նոյէն վուր կիդրոնիցը դուս էկաւ ու Մասուս սարէմէն դիմիր էկաւ, առաչ ինչ արից. էկաւ ու դէմուդէմը Էչմիածնի կուռը մէ բաղ շինից, բաղի կուցքին էլ մէ թաւլա էր շինիլ ուր, վուրդի էն ամէն ապրանքն ու մալը ինչ վուր ծարդուհօրին (Ջրհեղեղին) հիդը վերցրել էր՝ դիմիր էր բերի էտ բաղի կուխքի թաւլէքում, գոմերում ու մարաքներում էր կապեցրի. էտ օրուանից մինչևի հիմի, Պլանի մէջ ապրողները նրանք ին, Նոյեմէն մնացած մալն ու ապրանքը։

Էստի մէ վուխտ կէր, վուր լաւ ժածուն, կարապ ու ձեր ին շինելիս էլի. էտ էլիլ է էն չախը, իփ վուր մարթուհանգի՝ կոճն էլ, գոմէշն էլ, օխչարն էլ, էծն էլ կթւում էին. հիմի էտ մալն էլ, վունց վուր մարթիքը, հայ լուսավուրչական խալխը, զարատովկա ին արի ու էլ բան չին տալի, էլ չին կթւում։

Լուսահոգի Նեբսէսը, էն վուր Վանքի չկօլ մոզոնից, Էչմիածնի կուցքին մէ լաւ ուստան է շինի, մէ հեստի անտիկա բան, վուր էնգիզունիէն ժամ գաս, էտ թաւուր բան չիս կանայ գթնի։

Ներսէսի վուխտից մնացած, եղիս վարթապիտ Հասան-Ջալալովից վուր հարցրի ուստանի շինելու միգեզը, հրամանք արից թէ՝ յուսանոմի Հոմեուր Տէրը, կօսէ, զուզէր վուր, էչմիածին եկողները ու վարդապետ դառնողները եսի չիղնան, վուր խոսկին, կօսէ, միղներնեմէն, ու փիս փիս ախտերնեմէն, համա նիմի էտենց չէ, կօսէ. մէ վուխտ էլ կեր վուր, կինից բեխաբարները. եսի եին զրնում, կօսէ, իրենց հանգիստը. նիմի կի... է՞ն ինչ ասիմ, կօսէ. եսի սիղի բիղի ու պաչպըչելու տիղ է դառի, կօսէ. Մէ ուրիշ վարթապիտ էլ հրամանք արից վուր՝ յուսանոս գիշիրը լճի ափին պաչպչիլը, կօսէ, խիստ օտկում է, կօսէ, մարտողութէնին, ու էտու համա էլ, կօսէ, Էչմիածնումը օչով չէ գանգատւում, կօսէ. պաս չպահելուց, վունց վուր առաչ էին, կօսէ։

Մէշէն խօ հեստի լաւ թաքցնելու բան է մոգոնած, կօսիս հենց էտենց էլ պիտի ըլի, վունց վուր կայ։

Արմադան բան է թանգարանը, էստի ինչ դուզիք կու գթնիք. թաքաւուրների թագեր, կաթղիկուսների խոյրեր, էպիսկոպոսներու մատներներ, սըրփերու ոսկորներ, սրանց վրէն հասուցածը ուփրօ շատ է փիքր արի, քանց թէ խելքի համա. ու ով ասիս սրանցմով պարծեցիլ է, մինչևի էնդղած վուր

Աստուած որքառութէնի բաժին անէ Նիկոլա Մինձ Թաքաւուրը, վուր էկել է, նա էլ իմացել է թէ, էս Թանգարանում Թանգ գնանուց բանիր շատ կայ, իփ վուր տեհել է իրա սակութար աչքով. արմացել է, էստի դիփ փալշիւի ակնիր է, կօսէ։

Հալբաթտա էս փալշիւութինը վաղուց է մօդա, վուր ակունքից կցած մինչկլի մարթիքը, դիփ փալշիւացել ին։

Հայրիկի Թանգարանում, էժան գնանուց բանիր ուփրօ շատ կան, քան թէ Թանգանուցնիր, ուփրօ լաւ կուլէր վուր միր վարթապիտ էպիզկոպոսնիրից, հնիրից ու նորիրից, հիմիկնէթ էնդի տանէինք ու էնդի պահէինք, չունքի էս էկզիմպլեարի խալխ ուրիշ ջէր խիստ հիշտ չի ճարւի։

Էս Թանգարանի, մուզէյինի խարջ է միր հաջի Ամբարցումը, Սեդրակ Մանդինովը, Կարապետ Կոստանովը, Բաղդան Դոլուխանովը, Մինաս Ջերագը, վունց վուր ասկի գուրձիչնիր, Աշոտ էպիզկոպոսը, վունց վուր ռուսմի ձէնի տէր, Բէնիկ վարթապիտը, վունց վուր մաղցուտ սրտի տէր, Եղիա վարթապիտը, վունց վուր խասակ մարթ, Գալուստ միարանը, վունց վուր մինձ խիլքի ու քիչ գուրձի տէր։

Էն վուր փարաջայ ին հանում, նրանցմէն էլ մօդելնիր վուր հանինք ու կպէ կարասի մէչ Թաթախած մօդելնիր գնինք, դա էլ լաւ կուլի։

Էն ժուղը Արսէն չիք վարթապիտ Ղլրաչեանցը էրեխեքին վախեցնելու բան կուլէր։

Մաշ։

Էչմիաձնի գրադարանը աշխրքիս ամենահարուստն է, իրա գրչագիր գրքիրով, իրա մագալու ու Թանգ աւետարաննիրով։

Էս գրադարանի համա ասում ին վուր, մէ քանի միլիօն աժէ։

Ղուրթ է։

Էչմիաձնի գրադարանը իմ սակութար աչքերով տեհայ, հարուստ վուր չըլէր ուրիշ բաներով, Թօզ ու կիխտով խիստ հարուստ է, խիղճ վարթապետնիրը, էնդղամ ին կարթում, վուր խակի վուխտ չունին, Թօզ ու տխալը սրփիլ տալու։

Իմ հոքին գիդենայ, ղուրթ իմ ասում, ա՛յ միր Ալէքսանդրէ Թաղխադվին գուղէք հարցրէք, նա էլ գիդի էս։

Էչմիաձնումը ամենից լաւը վուր կայ՝ սեղանատունն է։

Աստուած օխնէ հաուց ասկին, վուր էս հանդիբան է մօզոնի. համ հոքու, համ մարմնի-փուրի համա խիստ լաւ է, վուր մարթս փիքը է անում։

Մէ մէ ախմախ, խլաքի էն տուտուցնիրը, մէ գլուխ էն ին ասում. մարթու հոքին պիտի լաւ ըլի, կօսէ, հոքին վուր կայ՝ հոքի է, կօսէ։ Ես արմնում իմ, իփ վուր էս Թաւուր ուցնաւուր բանիր իմ լսում, հոքին տանից մարմին քանի գրօշ աժէ, հ՞ը։

Արա քաղցած փորով, ի՞նչ դայդի կանաք ասկի համա փիքր անի։

Էն արա մէ ասկի գուրձիչ, էն ասկի փրգիչ չանց ուէք, վուր հոքուց աւել փորի համա չկի փիքր անելիս։

Փորը վուր կայ, փուռ է...

Ի՞նչ մէչը ածիս, կու էփւի, կու խորւի. ու էփածն ու խորւածը, էս խօ ամենքդ էլ գիդիք, վուր հիշտ կումարւի։

Մէ վուխտ կէր, կօսէ, վուր միր վանքի ամէն մէ միարան, էնդի էր ճաշում ու ճաշի ժուղն էլ աղօթքնիր էին ասում, կօսէ։

Հիմի էչմիաձնի միարաննիրը ուփրօ հաց անելով ին գնում սեղանատուն, ասում ին շատ փայը չէ գնում, կօսէ։ Դրանց տիղ էնդի ին ըլում միր գուրձիչնիրը ու ցօցիալ տիրացուները, ու աղօթքի տիղ՝ ուշունցնիր է, վուր լըսւում է հարիրաւուր տարւայ կամարնիրի տակը։

Փոր ան փուռը, ի՞նչիցն է, վուր էս խուսքիրը մէկմէկու խիստ նման ին։

Էս բանը պիտին իմանայ միր գուրձիչնիրը, միր ցօցիալնիրը։

(Էլի կուլի)

Գասպար Կալաշաւզեանց

---

## ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ

—Ի՞նչ պէտք է անէ ամուսինը, երբ կինը դաւաճանում է նրան։

—Ներողութիւն պէտք է խնդրէ, որ ինքը դժբաղդացրել է նրան։

—

—Ի՞նչպէս է նայում կնոջ վրայ ժամանակակից տղամարդը։

—Ինչպէս մի Թանկագին խաղալիքի վրայ։

—

—Ի՞նչ բաներ են ճշմարտութիւնը և խիղճը։

—Դատարկ խօսքեր։

—

—Ի՞նչ է պատիւը։

—Անպէտք իր։

—

—Ինչո՞ւ Բագւում այնքան գինետներ կան։

—Որովհետև ընթերցարաններ չկան։

—Ի՞նչ բանի են ծառայում հայ լրագրները։

Մրգեղէնի համար տոպրակներ շինելու

Վլթում

---

## ԱՆՎԵՐՋ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

(Ռուսերէնի նմանողութեամբ)

Ցասմիկի ծաղի հովանու ներքեւ
Դու ինձ տւեցիր սիրոյ մի պարգեւ.
Քնքոյշ մարմինդ կրծքիս սեղմեցի,
Ու քեզնից ծածուկ հոգիդ խմեցի.
Ծածկեցիր ինձնից դէմքդ ամօթխած,
Ննջեցիր անդորր մինչեւ լուսաբաց.
Եւ երբ Թարթեցիր քո փայլուն աչեր,
Մրմնջացիր ինձ անցեալի յուշեր...
—«Կը գամ, սիրելիս, նորից այս գիշեր,
Նորից յասմիկի հովանու ներքեւ
Ինձնից կը ստանաս սիրոյ մի պարգեւ.
Նորից մարմինս մարմնիդ կսղմես
Ու ինձնի՛ց ծածուկ հոգիս կը խմես.
Կը ծածկեմ քեզնից դէմքս ամօթխած,
Նորից կը ննջեմ մինչեւ լուսաբաց.
Եւ երբ որ քնից կը զարթնեմ նորից.
Կը մրմնջամ քեզ անցեալի յուշեր.
*«Կը գամ, սիրելիս նորից այս գիշեր,
Նորից յասմիկի հովանու ներքեւ
Ինձնից կստանաս սիրոյ մի պարգեւ»...
(Եւ այսպէս անվերջ)   Սել-Ֆիդ

---

## ԴԻՍԻՑ-ԴԻԼԻՆԻՑ

Մարդու մէկը սովորութիւն ունէր ծխախոտի համար իրան կրակ մատուցանողին շնորհակալութիւն յայտնել։ Մի անգամ նա սեղանի վրայ վառող մոմից կպցրեց իւր ծխախոտը և սովորութեան համաձայն, խիստ քաղաքավարի կերպով շնորհակալութիւն յայտնեց մոմին գլխի շարժումով, ապա զգալով իւր վարմունքը, զզուշութեամբ ու քաշւելով շուրջ նայեց, արդեօք ոչ որ չնկատե՞ց իրան։

—

Մի կատակասէր բանւոր գործարանային գեղատանից գլխացաւի դեղ խնդրեց։ Նրան մի փոշի տւին, որը ընդունելուց յետոյ՝ նա գլխիվայր կանգնեց։

Շրջապատողների հարցին, թէ ինչո՞ւ է այդպէս անում, նա պատասխանեց, «այսպէս եմ անում, որ դեղը անցնի գլուխս և ազդի գլխացաւին։

—

*) Պ. խմբագիր!

Մինչև այժմ դուք իմ բանաստեղծութիւնների իւրաքանչիւր տողին վճարում էիք 10 կոպէկ, այս մէկ բանաստեղծութեան համար զիջում եմ և պահանջում իբրև տողավարձ $\frac{1}{10}$ կոպ.

Խնդրում եմ չմոռանաք բանաստեղծութեան անվերջ լինելը   Սել-Ֆիդ

# ԶՈՒԳԱԿՇԻՌ

### Տարագասէր

Գլխից լայնեզր «լեռնի» շլյապան
Շինել ես մի ճեմելիք
Եւ շռայլաբար շուրջդ ցանկել՝
Ծառ. թուփ, արօտ ու ծաղիկ։

Այդ ահագին ծառաստանը
Ման ածելով քո գլխին՝
Կամենում ես—գիտեմ, տիկին,—
Մի կերպ գրաւել անցնողին…

Բայց քո սիրտն էլ մի ժամանակ
Ճոխ պարտէզ էր—ծաղկաշատ.
Իսկ դու նորան ինչ շինեցիր,—
Մի փշալից անապատ…

### Տնասէր

Թէև չունես, այլոց պէս,
Ոսկի գոհար զուգս ու զարդ,
Բայց անթերի չքնաղ ես.
Ինչպէս համեստ վայրի վարդ։

Հոգ չէ… ունես հասարակ,
Խղճիդ նման, մաքուր զգեստ
Եւ սիրտ—անբիծ, ջինջ յըստակ՝
Սուրբ գանձերի ճոխ պահեստ…

Ազնիւ կինը իր մարդուն
Մի պսակ է—թանգագին.
Երանի այն ամուսնուն,
Որ տիրում է այդ թագին…

Լիլիպուտի

# ԹԱՏՐՈՆ ԵՒ ԳԵՂԱՐՒԵՍՏ

## ՕՊԵՐԱ

Արքունական թատրոնում այս տարի աւելի աշխոյժով են երգում, քան ուրիշ անգամներ, այս տարի աւելի լաւ են պարում, քան ուրիշ տարիներ, այս տարի աւելի շատ են զռռում, բղաւում, քան այդպէս էր ուրիշ նւագներում,

Եւ ինչ է պատճառը։

Պատճառը պարզ է, ով փող ունի, խոկոյն շռայլում է տոմսակ գնել և գիշերը անցկացնել օպերայում. հասարակութեամբ լիքը թատրոնը լաւ է ազդում դերակատարներից սկսած՝ մինչև շվէյցարները, դիրեկտորից սկսած՝ մինչև յետին սափիկանները։

Գիտականօրէն հաստատւած է, որ լիքը թատրոնը ոչ միայն արտիստների խաղին տրամադրութիւն է նպաստում, այլև գրպանին և առողջութեան։

Այդ կողմից Բարխենիկօն, որ լաւ ռոճիկ և բաժին է վայելում, աւելի արտիստօրէն է բղաւում, քան թէ նա, ով քիչ է ստանում, բայց լաւ երգում։

Տիկին Կալինինա, արաղաղային նօտաներ ունի, իսկ Դէ-վօս Սօրօկը յիշեցնում է աշնանային սոխակի գալայլիկը։ Շուլգինայի Տատեանի հետ, Օնէգինի չափրահարելը պատճառ ունէր. նա այնպիսի սանդրւածքով է երևան գալիս, որ կարծում ես թէ, ոչ թէ 17—18 տարեկան խոհուն Տատիանան է, այլ 40—50 տարեկան «տեօտեա» Մարֆուշան։

Տէնօր Տիրացեանի ձայնը, թէև տիրացուական չէ, բայց այնչափ պատիկ է, որ Կաչամարովի ձայնի հետ միասին կարելի է փոքրիկ արկղիկում պահել։

Լաւ է բալէտը, թէև բալէրինաների թըռիչքները շատ անգամ աւելի զգալի են, քան թէ գեղարւեստական։

Տիկին Արմէն Օհանեանի հարէմական պարերը որչափ կրքոտ և հասարակութեան հետաքրքիր է. նոյնչափ էլ անպայման ադեղ՝ թևերի տակը բաց պահելը, որը փչացնում է նուրբ իլլիւզիան։

«ԱԳՈՒՇ» —

Ի նկատի ունենալով, որ հայ հասարակութեան մէջ վերջերս չափից դուրս շատացել են ապուշները (ИДIОТЪ) ուստի և դերասանների ընկերութիւնը առաջս 19-ին Արտիստիքական Ընկ. թատրոնում, խաղալու է Դոստոևսկու «Իդիօտը», որ անչափ շնորհալի, անչափ ճշգրիտ խաղում է և ներկայացնում է արտիստ Իսահակ Ալիխանեանը. յոյս ունինք, որ գոնէ այս անգամ հայ հասարակութիւնը կը յաճախէ թատրոն, այլ կերպ զարմանալի է մեր աբուրքը, մենք գնում ենք Խօջիվանք, Ծիրանուոր, Շաւնաբաթ, Ֆունիկուլիօր, Մուշ-

# ՖԵԼԻԷՏՕՆ

## ՀԱՄԲՈՅՐՆԵՐԻ ՇԱՐԺԱՌԻԹԸ

Բաղդաւորութիւն ունեցայ անցեալ օրը կէս ժամով զրօսնել պ. Գասպար Կալատուզեանի հետ Գօլօվինսկի պրօսպեկտի վրայ և կարող եմ ասել, որ այդ փոքրիկ զրօսանքի յիշատակը յաճախ կը վերարտադրւի իմ յիշողութեան մէջ, ամէն անգամ առաջ բերելով կուշտ ծիծաղելու անզուսպ ցանկութիւն։

Սակայն բաւական է յառաջաբանը, խօսենք գործի մասին բուն էութեան։ Թէև ես լաւ գիտէի, որ պ. Կալատուզեանը թուլութիւն ունի առհասարակ միշտ ջերմ համբոյրներ շռայլելու իր ծանօթներին (անշուշտ զուգէ և ծանօթուհիներին), սակայն այդ օրւայ համբոյրները նրա կողմից չէին բղխում, այլ ուրիշներից էին անձրևի նման թափւում նրա վրայ։

Սրանից ընթերցողն անշուշտ կը երևակայի, որ հարցը վերաբերում է համբոյրներին. սակայն դա դեռ բոլորը չէ. համբոյրներն իրանց կարգին, իսկ մազալուն դրանց շարժառիթն էր։ Բայց թող փաստերը խօսեն։

Հազիւ էինք երկու քայլ արել միասին, որ ահա նրա վզովը փաթաթւեցին մի վիթխարի տիտանի երկու ուժեղ ձեռքերը և նրանց համբոյրի շըլըփոցից, վեր թռան փոխարքայի դրան կանգնած կառքի ձիաները։ Համբուրողը նորեկ երգիչ էր, որ յայտնեց թէ տասւօտանից նրան էր փնտրում, որպէսզի յանձնի ձրի հրաւիրատոմս, որով պ. Գասպար Կալատուզեանի համար՝ նա յառաջացրել էր իր բէնեֆիսին լօժայում՝ ամենապատւաւոր տեղը։ Դա ինձ ի հարկէ չը զարմացրեց, որովհետև խմբագիրներն առհասարակ յաճախ են արժանանում այդպիսի փառքի, որը կարելի է ասել, հէնց միակ վարձատրութիւնն է նրանց կրած ամենօրեայ նեղութիւնների և զրկանքների. բայց շուտով ես զարմանալու ուրիշ առիթ ունեցայ և դա այն էր, որ երգիչը դէմ արեց պ. Կալատուզեանին իր լուսանկարի կլիշէն և մեծամարար խնդրեց նրան այս շաբաթւայ Խաթաբալայում տպել տալ, ի հարկէ հանդերձ ռեկլամով… Ինձ համար այժմ մի քիչ պարզւեց նրա ջերմ համբոյրի շարժառիթը, սակայն չը համարձակւեցի ակնարկել այդ մասին պ. Գասպար աղին և մենք շարունակեցինք մեր քայլերը։

Դեռ չէին սառել առաջին համբոյրները նրա շրթունքի վրայ և ահա հեռուից իր գլխարկն ու վերարկուն ճօճելով, վրայ պըրծաւ մեր հանրածանօթ և սիրելի դերասաններից մէկը ու որքան ուժ կար իր դերասանական կոկորդում, գոռաց.

—Օ՜ ես քո խաթաբալա ջանից մեռնեմ.

—Ա՜խ, ես քո խուլիգան հոգուդ մատաղ. —հազիւ կարողացաւ պատասխանել նրան պ. Կալատուզեանը և նրա ձայնը խեղդւեց տաք տաք համբոյրների տարափի տակ։ Երևի սրանք միքանի տարի է, որ իրար չեն տեսել, մտածում եմ ես, դրա համար էլ խեղճերն այսպէս կարօտել են միմեանց, սակայն իմ կարծիքս սխալ դուրս եկաւ՝ երբ նա շրթունքները մաքրելուց յետոյ՝ կարողացաւ վերջապէս առաջին հարցը տալ, թէ ուր էր կորել նա այս 4-5 օրը, որ ազատել էր Գօլօվինսկի փողոցը մաշելուց։ Ա՜, հէնց օրւայ բաժանում և դա այդքան զգալի է դրանց համար. դա խիստ արտառոց է. իսկ դեռ մարդիկ գանգատւում են, թէ մեր ժամանակ առհասարակ սառել են մարդկանց սրտերը, թէ չը կայ անկեղծ բարեկամութիւն. էլ ուր են, թող այդպէս ասողները գային ու տեսնէին այս անվերջ համբոյրները, որ էլ չը բամբասէին մեր ներկայ հասարակութեանը, որ նա իբր թէ կեղծ է, անսիրտ և էգօիստ… Ահա այդ հաճելի զգացմունքն էր նոյն րոպէին համակել ինձ, երբ դերասանը դուրս քաշեց ծոցագրպանից իր մի կարիկատուրան, որ նկարել էր իր ձեռքով և յայտնելով որ կիրակի լինելու է իր առաջին ներկայացումը, խնդրում էր, որ դա տպւէր Խաթաբալայի այս շաբաթւայ համարում, ի հարկէ հանդերձ ռեկլամով… Գասպար աղէն

տայիր, գնում էինք ցիրկ և պրաժեկտոր, իսկ հայ ներկայացման չէինք գնում։

Սրանից էլ լաւ աղչութիւն։

Do-si

—

Շաբաթ, նոյեմբերի 10-ին Հաւլաբարի թատրոնում «Նոր-Դրամա» ընկերութիւնը ներկայացրեց «Թաղի համար» պիէսը, որը հաւլաբարցիք տեսել են մի քանի անգամ նոյն թատրոնում, հենց այդ պատճառով էլ թատրոնը համարեա թէ դատարկ էր։

Խաղը կանցնէր շատ յաջող, եթէ պ. Աբօ Խարազեանի հետ մասնակցողները նրա [illegible] շնորհքն ունենային։

Հասարակութիւնը այս անգամ աւելի անկարգ էր պահում իրեն. ամեն մէկը աշխատում է բազմել առաջին կարգի աթոռների վրայ, ի հարկէ ուրիշի տեղերը։

Ընկերութիւնից խնդրում ենք, հետեւեալ ներկայացմանը մի աղբի արկղ դնել գալերէյում, որպէս զի ձու ուտողները կճեպներով պարտերը չնախշեն։

—

Միւս օրը, կիրակի, Զուբալովի անուան ժողովրդական տանը, հայ թատերասէրները՝ դերասանների մասնակցութեամբ ներկայացրին Իւշկէվիչի «Թագաւորը»։

Խաղը անցաւ շատ յաջող և ոչ մի հետք չթողեց հասարակութեան վրայ։

Օր. Զմշկեանին յայտնելով ազգի շնորհակալութիւնը, ցանկալի է մշտական տեսնել նրան հայ բեմի վրայ։

Իսկ օր. Սոլովեանին խորհուրդ ենք տալիս, փոխանակ վաղօրօք գալ և կանգնել թատրոնի շէմքում, խելքն մտնել կուլիսների յետև և դերը սովորել։

Թատրոնը ոչ թէ ծայրէ ի ծայր, այլ գլխէ ի գլուխ լիքն էր։

Սեկցիայի հետեւեալ ներկայացումը կըլինի նոյեմբերի 22-ին։

Բալսօօ

***

(Նմանողութիւն)

Այնտեղ ուր որ ալիքները
Խփում է ծովն ափերին,
Ուր սոսկալի ոգիները
Ոռնում են կէս գիշերին.
Որտեղ հպարտ ժայռի գլխին
Կուտակուել է միշտ ձիւնը,
Ուր որ բարձր քարի գլխին
Արծուին հիւսել է բունը,
Որտեղ որոտ, կայծակի դէմ
Ոգիներն են մաքառել,
Ես բացարձակ ձեզ ասում եմ՝
—Այնտեղ երբէք չեմ եղել։

Սել-ֆիդ



## ԱԶԳԱՅԻ՛Ն ՕԴԱԳ՛ՆԱՑՈՒԹԻՒ՛Ն

### ԶԵԿՈՑՈՒՄ Ա.

(Շարունակութիւն)

Յօդ. 9. Արգելւում է թռիչքների մասնակցողներին հետները վերցնել. կուսակրօններին՝ անտեսած գումարը, անդրադէտ ուսուցիչներին՝ վկայականները, երեցփոխներին՝ հաշւեմատեանները, դերասաններին՝ ապառիկ վերցրած շորերը և ամուսիններին՝ սիրեկանները։

Յօդ. 10. Ուսուցիկ ծրագրներ կազմողները, ատամի բշտիկներով խաղացողները, լրագրական սուտ լուրեր հրապարակողները, նոր գիւտեր անողները. (բացի մաղօլի, մաղերի, պզուկների և այլ մանր մունր դեղեր հնարողները.) իրաւունք ունեն դիմելու կեդրոնին, խորհուրդներ և պատասխաններ ստանալ ձրի։

Յօդ. 11. Ազգային Օդագնացութեան Ընկերութեան խորհուրդը, կրում է պատուարժան տիտղոսը, և առանց այդ տիտղոսին եղած բոլոր դիմումները, մնում են անպատասխան։ Խորհրդի ամեն մէկ անդամը, լիակատար իրաւունք ունի, անհատապէս իրեն եղած ամեն մէկ դիմումին, եթէ մեծարւած է պատուարժան մակդիրով՝ խորհրդի ամբողջ կազմի կողմից կարգադրել, պատասխանել, դրւատել կամ անգոսնել դիմողին։

---

յայտնեց որ արդէն այս շաբաթուայ համարը պատրաստ է և գծագրողը այնտեղ էլ տեղ չի լինելու դրա համար.

—Դէ որ այդպէս է, պահէք և միւս շաբաթ կը տպէք ռեցենզիայի հետ... Դա գոնէ ապագայի գբօրի համար լաւ կը լինի—ասաց դերասանը, կարիկատուրան իր ձեռքով կտրեց պ. Կալանտարեանի գրպանը և քանի դեռ սա ուշքի չէր եկել, մէկ էլ պինդ համբուրեց նրան և փախաւ։ Այսպիսով ինձ համար պարզւեց և սրա համբոյրների շարժառիթը և ես, որ սկզբում տեսնելով այդ ջերմ սիրալիր համբոյրները և համարելով դրանք անկեղծ սիրոյ արտայայտութիւն, ինքս ինձ մեղադրում և կոպիտ դատաւոր էի համարում, որ չորս ամսի անջատումից յետոյ էլ, Գասպար աղին պատահելով չէի համարձակւել համբուրել նրա հետ, այժմ ես այլ ես չէի կարողանում զսպել ծիծաղս և քիչ էր մնում այդ բանը յայտնեմ նրան, սակայն նոր համբոյրները խանգարեցին մեր զրոյցը։

Այս անգամ փողոցի միւս կողմից ձեռնատարած դէպի մեզ էր շտապում բաւականին համեստ հագնւած մի միջահասակ կին, որի դէմքից երեւում էր, որ նա ջահէլ ժամանակ անշուշտ բաւականին գեղեցիկ եղած կը լինէր. նա այժմ 40-45 տարեկանի տպաւորութիւն էր թողնում, հին գլխարկը ապացոյց էր նրա աղքատութեան, իսկ մերկ ձեռքերը բարձրաձայն վկայում էին, որ նա անպատճառ պէտք է լինի հայոց վարժուհի։ Նախկին համբոյրների ազդեցութեան տակ, ես սարսափով սպասում էի, որ այժմ էլ փողոցում համբոյր պիտի տեղի ունենայ նրա հետ, սակայն պ. Կալանտարեանը կանխեց և խմբագրային լրջութեամբ համբուրեց տիկնոջ ձեռքը, այդպիսով վերջ տալով համբուրային ինցիդենտին։ Երեւի մօրաքոյրը կամ մի ուրիշ մօտիկ ազգականն է, որ երկար տարիների անջատումից յետոյ, վերջապէս գտնում է նրան, մտածում էի ես,-բայց նրանց խօսակցութիւնից երեւաց, որ նրանք իսկի էլ ազգականներ չեն, այլ բարեկամներ են ազգային հողի վրայ, այսինքն մէկը ազգային խմբագիր է, իսկ միւսը ազգային վարժուհի. այդ էլ շատ ուրախալի է, որ ազգային գործիչներն այդպէս հաշտ և սիրալիր են միմեանց հետ, գոնէ չեն ասիլ ուրիշները, որ ազգայինները ոչ միայն ոչինչ չեն շինում, այլ և անվերջ կրծում են միմեանց...

Սակայն ես շուտով համոզւեցի, որ մեր այդ ազգային կրծոցը, ոչ միայն չէ վերջանում՝ այլ ընդհակառակը զարգանում է։ Տիկինը մի կարճ յառաջաբանից յետոյ, գրպանից հանեց մի երկար յօդւած և վշտահար դէմ անելով պ. Կալանտարեանին՝ խնդրեց տպել «Խաթաբալայի» այս շաբաթուայ համարում։ Մենք տեղնուտեղը աչքի անցրինք այդ յօդւածը, որից երեւաց թէ տիկինը սաստիկ զզւած էր ազգ հոգաբարձուներից, որոնք իր ռոճիկը ահա մի ամիս է ուշացնում են, այն ինչ միւս վարժուհուն, որը 20 տարեկան է և կօկէտավարի քըրքըջել գիտէ (այդպէս էր արտայայտւում տիկինը) վճարել են ժամանակից էլ 2 շաբաթ առաջ։

Ես հասկացայ, ուրեմն դրա համար էր ուզում տիկինը համբուրել Գասպար աղին։ Նա էլ չպատահելով պատասխանի՝ գնաց, թողնելով յօդւածը պ. Կալանտարեանի ձեռքում և ես այլեւս չհամբերելով ասացի.

—Ներիր ինձ, Գասպար աղա, որ ձեզ հանդիպելիս չհամբուրեցի, որովհետև ես չգիտէի թէ համբոյրներն այժմ այնպէս ընդունւած են ձեզանում։

—Ոչինչ սիրելիս, ներում եմ. էհ կը գայ ժամանակ որ դուք էլ կը համբուրէք ինձ, երբ որ...

—Ի՞նչ, երբ որ ի՞նչ... ասացէք խնդրեմ։

—Երբ որ... դուք էլ մի ցաւ կունենաք և «Խաթաբալայի» ռեկլամի կամ ռեցենզիայի կարիք կունենաք. ահա այն ժամանակ դուք էլ կը համբուրէք։ *)

Գ. Ն. Լ.

*) Այդտեղ մենք բաժանւեցինք միմեանցից. կամ աւելի ճիշտն ասած, նոր համբուրողները պաշարեցին Գասպար աղին և նա էլ հնարաւորութիւն չունեցաւ շարունակել ինձ հետ իր զրօսանքը։

Յօդ. 12. Ընկերութեան խորհուրդը իրեն է վերապահում նիստեր կայացնելու որոշումը, ոչ մի գործ, ոչ մի դիմում, ինչքան էլ անհրաժեշտ և անյետաձգելի լինի, չպիտի կարողանայ ճնշում գործ դնել և ժողով գումարել տալ։

Յօդ. 13. Ընկերութիւնն անպատճառ ունենալու է իր օրգանը, որի խմբագիր կարող է լինել ամէն մի պատուախօս հայ։

Եւ այսպէս, սիրելի ընթերցող, շարունակւում են յօդուածները մինչև 308, որոնց շատերը բոլորովին աւելորդ տեղն են խըմբագրել և կեանքի մէջ էլ գործադրութիւն երբէք չպիտի ունենան, Այդ պատճառով էլ ես զանց եմ առնում այստեղ մէկ մէկ շարել։

Առաջին թռիչքը նշանակւած էր Թիֆլիզում, հինգշաբթի օրը ճաշից յետոյ, Յունիկուլեօրի սարի վերայ։ Դեռ առաւօտից անհամբեր բազմութիւն էր հաւաքւել այնտեղ։ Ուղիղ ժամը 12 ին ժողովը բացւած յայտարարեց նախագահը, մօտաւորապէս մի այսպիսի ճառով։

—Արգոյ ազգայիններ, այսօր մենք գտնըւում ենք մեծ դէպքերի նախօրեակին։ Օդագնացութիւնը ամենամեծ յեղաշրջում կարող է առաջ բերել ազգերի կեանքի մէջ։ Նա մեծ չափերով գործադրւում է այժմ Եւրոպայում. ամօթ էր մեզ, որ յետ մնայինք, մանաւանդ որ ընդհանրապէս օդի հետ մենք աւելի շատ շփումներ ունինք, քան եւրոպացիք։

Այս նպատակով ես և ընկերներս հիմք դրինք այս ազգօգուտ գործին։ Ես և ընկերներս, առաջ էլ աշխատում էինք ազգօգուտ ուրիշ գործերի մէջ և լաւ արդիւնքներ ենք հասել։ Այդ մասին վկայում են բոլորը, բացի մի քանի նախանձոտներից, որոնք մեր արած ոչ մի բանին չեն հաւանում։ Այսօր էլ բացւած ենք յայտարարում «Ազգային Օդագնացութեան» առաջին թռիչքը և խնդրում ենք պ. քարտուղարին կարդալ ստացւած շնորհաւորական հեռագրները։

Հանդիսականներն սկսեցին բացականչել «կեցցէ նախագահը, կեցցէ, կեցցէ...

Ապա ես բարձրացայ ամբիոն և կարդացի հետևեալ հեռագրերը։

1) «Ի սրտէ շնորհաւորում ենք ձեր գործը։ Ցեպպելլին, Բայտ, Լատամ, արքայազն Հայնրիխ։

2) Շնորհաւորելով ձեր գործը, առաջարկում եմ ծառայութիւնս։ Տատարինով։

3) Օրհնում եմ ձեր ձեռնարկութիւնը, աչքի առաջ ունեցէք երկրորդ թռիչքին ինձ ևս մասնակից անելու։ Ես ցանկանում եմ բիպլանով, կամ դիրիժաբլով գնալ վերինն Երուսաղէմ, ներքին Երուսաղէմում այլ ևս ինձ համար գործ չմնաց անելու։

Պատրիարք Երուսաղէմի Յարութիւն

4) Շնորհաւորելով առաջին թռիչքը, խընդրում ենք օդապարիկի մէջ տեղաւորէք Դուրեան պատրիարքի հրաժարականը։

Քաղաքային ժողովի ատենապետ

Գարալեան

(Կը շարունակւի)

* * *

(Նմանողութիւն)

Մանկիկս դու իմ համեստ՝
Թէ լինէի ես արքայ,
Եւ արքայի ծոփ ըզգեստ,
Եւ գայիսոն, եւ իմ գահ
Ես կը տայի բոլոր հէշտ
Միակ հայացքիդ համար։

* * *

Թէ լինէի ես իշխող
Հայաստանեանս անբատ,
Տարածներիս հրամայող,
Իմ փողերին անհամար,
Չէի լինի խնայող
Միակ համբոյրիդ համար։

* * *

Թէ տէր լինէի աշխարհի,
Եւ երկնի խորութիւն,
Տարածութիւն հողերի,
Յաւերժութիւն, զօրութիւն,
Բոլորը ես կը տայի
Միակ ննջիւնիդ համար։

* * *

Թէ լինէի Արարիչ,
Տիեզերքին՝ ըստեղծող,
Արարածներին վարիչ,
Երևոյթներին կարգող,
Չէի լինի ես ժլատ
Փայփայանքներիդ համար։

Leonis

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԱՅՐԵՐ

(Թարգմ. ռուսեր.)

Տիկին Սօֆիան նստած զահաւորակի վերայ, խոր մտածմունքի մէջ էր։ Նորա փեսան գժգոհութիւն էր յայտնել իւր աղջըկանից, որ այլևս անհնարին է նորա հետ ապրելը։

Երկար մտածելուց յետոյ, տ. Սօֆիան մօտեցաւ հեռախօսին և սկսեց զանգահարել.

—Ա՜... Աննա... այդ դու ես... Լաւ... քո ամուսինը այստեղ էր, հենց նոր հեռացաւ այստեղից... Շատ հետաքրքիր խօսակցութիւն եղաւ քո վերաբերեալ... Մինչև ամուսնուդ գալը աշխատիր գալ ինձ մօտ... Այո... ես ուզում էի քեզ հետ խօսել... աշխատիր որքան կարող ես շուտ գալ... շատ կարևոր գործ կայ... Լա՛ւ... մի քառորդ ժամից...շատ լաւ... Ես կը սպասեմ քեզ.

Նա հեռանում է հեռախօսի մօտից և թեք ընկնում դիւանի վերայ, ձեռքերը դընելով գլխավերևը։ Այդ դրութեան մէջ, նա շատ գեղեցիկ և ջահիլ է երևում։

—Ա՜խ... սիրելի փեսայ, դուք ուզում էք բաժանուե՞լ... շատ լա՛ւ... Ես քեզ ցոյց կը տամ, թէ ինչպէս պէտք է բաժանուել... Սակայն ինչպիսի լրբութիւն, չորս ամիս է ամուսնութիւնը և, համարձակւում է բաժանուելու մասին խօսել...

Դրսից լսւում է զանգի ձայն, ներս է մտնում տ. Աննան։

—Ախ, այդ դու ես, Աննա... Բարև սիրելիս... Ա՜խ ինչպէս խղճում եմ քեզ. Ներիր, ներիր ինձ զաւակս, որ քեզ ամուսնացրի մի այդպիսի լրբի հետ... Բայց մի վշտանար աղջիկս, քո մայրը կը պաշտպանէ քեզ... Բայց ասա տեսնեմ սիրելիս, վաղո՞ւց է որ սիրական ունիս...

—Ի՞նչ ես ասում մայրիկ... Ե՞ս...

—Լիովին հաւատացած եմ... Ես բոլորը գիտեմ. իզուր մի աշխատիր ինձանից ծածկել... Եւ ես ոչ թէ միայն արդարացի եմ համարում քո այդ քայլը, այլ և շնորհաւորում եմ քեզ, իմ հոգեակս... Հետևապէս, ինձ հետ կարող ես ազատ խօսել։ Երբ որ քո ամուսինը արդէն կասկածում է, որ դու նորան խաբում ես. ուրեմն քեզ արդէն յաջողել է խաբել ամուսնուդ... Չէ՞ որ նա իբրև իւր պատւին պաշտպան՝ հաստատ կանգնած կմնայ իւր դիրքում։

—Շատ ցաւում եմ մայրիկ, որ պէտք է քեզ հիասթափեցնեմ... Ճշմարիտն ասած, ես սիրական չունեմ։

—Բայց մի՞թէ այդ կարելի բան է...

—Երդւում եմ քեզ, մայրիկ!

—Բայց ասա ինձ, ով է այն յիմարը, որ սիրաշահում է քեզ...

—Ինձ ո՛չ ոք չէ սիրաշահում, մայրիկ, վճռականապէս ո՛չ ոք։ Բայց ճշմարիտն ասած, մայրիկ, ես դեռ լաւ չեմ հասկանում թէ բանը ինչումն է... Խնդրում եմ բացատրիր ինձ...

—Ես կատարեալ ապշած եմ... Մի՞թէ իսկապէս սիրական չունիս...

—Հաւատացնում եմ քեզ մայրիկ, որ ո՛չ։

—Սորանից յետոյ ես հրաժարւում եմ քեզ հասկանալ... Այն ժամանակ ինչ է հարկաւոր քո յիմար ամուսնուդ... Ի՞նչ է պահանջում նա ինձանից, ես ինքս էլ չեմ հասկանում...

Հետաքրքրութիւնից տանջւում եմ իմանալու բոլորը... Աղաչում եմ, մայրիկ, ասա ինձ, գործի էութիւնը...

—Ամուսինդ ներկայանում է ինձ, և ի միջի այլոց ասում է, որ—այս վերջին ժամանակներս դու բոլորովին փոխուել ես, որ քեզ չէ կարելի ճանաչել... Երեկոները ուր որ գնում ես... Եւ շրջում կասկածելի բարոյականութեան տէր կանանց հետ և մինչև անգամ սովորել ես նրանց ընթացքի ձևերից... Նրան տհաճութիւն է պատճառում քո երկմտի խօսքերը... Մի խօսքով, որ դու կանգնած ես վատ ճանապարհի վերա, յետոյ նա խնդրեց ինձ, որ այդ հարցի վերաբերեալ, լուրջ խօսեմ քեզ հետ և ճանապարհի բերեմ քեզ... Ես ի հարկէ պատասխանեցի, որ դա ինձանից չէ կախւած, որ այդ իւր սեփական պարտականութիւնն է, և որ ես սկզբունքով հակառակ եմ խառնը-

ձել ուրիշի գործերին… Եւ գիտե՞ս նա ինձ ինչ պատասխան տուեց։

—Ոչ…

—«Այն ժամանակ—ասում է, ես ինքս կը խօսեմ կնոջս հետ և նախօրօք զգուշացնում եմ ձեզ, եթէ ինձ չյաջողուեց համոզել նորան, որ հրաժարուի իմ կամքին, այն ժամանակ հաճութիւն կունենաք մօտիկ ապագայում, յետ առնել ձեր սիրելի աղջկանը»։ Ա՜յ, ինչպիսի լիրբն է եղել… Այդ սրիկան համարձակւում է մեզ վախեցնել ապահարզանով… Դա սարսափելի է… Ի հարկէ, սիրելի աղջիկս, քեզ նախօրօք զգուշացնելը անհրաժեշտ էր, որ դու գիտենայիր անկիրթ․․ Ես հաստատ համոզուած էի, որ սիրական ես պահում, և այդ կը հաստատէր նրա խօսքը… Բայց քանի որ էական ոչինչ չկայ, այժմ ինչ ես մտադիր անելու…

—Ահա թէ ինչ… Ես այժմ իսկապէս կը սիրեմ որևէ մէկին.

—Ճանաչում եմ աղջկանս,.. Գիտեմ արիւնդ, որ հոսում է քո երակներում. դու բոլորովին նման ես ինձ, շատ լաւ. մենք այժմ ցոյց կը տանք այդ անպիտանին, թէ ինչ ենք մենք. ա… հերոսը չէ ուզում լինել «դաւաճանուած ամուսին»… Իսկ դորա փոխարէն մենք նորան փառաւոր կերպով կը ներկենք… Եւ այն էլ ինչպէս կըներկենք… Ես հաւատացած եմ, աղջիկս, որ դու որևիցէ մէկին ի նկատի կունենաս…

—Ի հարկէ։

—Ո՞վ է, ո՞վ…

—Գ. Ժօրժ Լօր…

—Ի՞նչ… ինչ ասացի՞ր… պ. Ժօրժ Լօրենը… ո՛չ, երբէք… Ես քեզ արգելում եմ… Նա խեղճ է… Ես… Ես… չեմ դիջիլ նորան քեզ…

—Ա՜խ… Ներողութիւն մայրիկ, այն ժամանակ, գտիր ինձ համար մի ուրիշ симпатія…

—Գնա, գնա տուն… Ես կը գրեմ քեզ… Կամ թէ, ոչ ինչ… Վաղը եկ ինձ մօտ… Ես այնպէս ուժասպառ եմ… Ա՜խ, դու ինչպէս կարողացար մտածել Լօրենի մասին… Լա՛ւ… Բաւական է… Բաւական է… Մի ասիլ… Մի ասել ոչինչ… Ուրեմն մինչև վաղը… գնա…

Նա ճանապարհում է աղջկանը և խանդաղատութիւնից. . . . . . . . . . . . . . . .

. . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .

. . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .

Մի քանի օրից տ. Սօֆիան, ուրախ-ուրախ մտաւ Աննայի սենեակը և յայտնեց որ մի լաւ симпатія է գտել նորա համար…

*Խորէն Ժան-դը-բիւլ*

---

# ՓՈՍՏ-ԱՐԿՂ

*Տուլավէր. Մ.-ին.*—Ձեր միւս գրուածքները չենք ստացել։

*Բոլոր տեղերի մեր ոտանաւոր Թխողներին.*—Ձեզանից շատերը անպայման տաղանդ և ձիրք ունին ոտանաւորներ շարադրելու, գրելու և մանաւանդ Թխելու, վերջերս նմանողութիւններով մեզ հեղեղում էք. քիչ է մնում մի այլ թերթ էլ հրատարակենք Ոտանաւորներ անունով. որպէսզի այդպիսի բան չլինի, խնդրում ենք մի քիչ էլ երգիծաբանական ոտանաւորներ Թխէք, որ մեզ համար աւելի յարմար լինի.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ.

Տղամարդկանց ԴԵՐՁԱԿ ՎԱՐԴԱՆԵԱՆԸ

ԶԻՆՒՈՐ ԳՆԱԼՈՒ ՊԱՏՃԱՌՈՎ վաճառում է արհեստանոցը. բոլոր սարք ու կարգով—կարի մեքենաներ, հայելիներ, կարի մեծ սեղաններ, էլեքտրական լուսաւորութիւն և բնակարանի մեծ յարմարութիւն և այլն և այլն։

Արհեստանոցը գտնւում է Թիֆլիզ. Միխայլովս. և Կոնկա. փողոցների անկիւնում № 1 Վեացելի հիւրանոցի դէմը։

Ծխախոտի գործարանից՝

Ն. Ի.

ԲՈԶԱՐՋԵԱՆՑ ԵՒ ՈՐԴ.

Ի վաճառ է հանուած

ՆՈՐ ՊԱՊԻՐՈՍ

«ТОВАРИЩЪ» 20 հատը 5 կոպ. (միջակ ձևի)

«ДРУЖБА» 20 հատը 5 կոպ. (բարակ ձևի)

Դիտողութիւն.

Առևտրական տունը վճռեց ի վաճառ հանել այդ պապիրոսները ամենահասարակ էտիկետներով, որպէսզի այդ կերպով հնարաւորութիւն լինի՝ պ. պ. ծխողներին միշտ էլ լաւ յատկութեան և աժանագին համով ծխախոտ ընձեռել։

Ամեն տեղ էլ կարելի է պահանջել

Մեծ քանակութեամբ տուած պատուէրները կը կատարուին ըստ չափու հնարաւորութեան։

ԲԷՅԻ ՀԱՄԱՐ ՊԷՉԷՆԻՅԷ

ԼԱՒԱԳՈՅՆ ՏԵՍԱԿԻ

ԷՅՆԷՄ.



ՆՈՐՈՒԹԻՒՆ ԹԻՖԼԻՍ!!

Պուշկինեան պատաժ № 4—6

ՄԻԱԿ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Յատուկ գերձակային պիտոյքների.—Տղամարդկանց և կանացի զանազան կոճակների, մետաքսի և բրդի չերիտների, բամբակի և մետաքսի զանազանագոյն թելերի. ձև անելու չափեր, կաւիճ, մեքենայի իւղ, զանազան սուտաշներ, փունջեր (փիսակիւլ) դայթաններ։ Այստեղ էլ ընդունւում են պատուէրներ զանազան կտորներից շինուող կոճակների. նոյնպէս ամեն տեսակ վայելչաձև ապրանքների. մշտապէս ստացւում են սեզօնի նորութիւններ։ Խնդրում եմ գնորդներին տալով ուշադրութեան չթողնել վաճառատունս և անձամբ համոզուել խանութիս մէջ։

Ապրանքների գները նշանակուած են ամենաէժան։

10—1 Մ. Գ. ԲԱԽՋԻՆԵԱՆՑ

МАГАЗИНЪ
## Композиція
**Тифлисъ Пушкинскій пассажъ № 8.**



ГРОМАДНАЯ ЭКОНОМІЯ
шведскаго компо-
зиціон. бѣлья.
→Носится не менѣе
двухъ лѣтъ←
Постоянный боль-
шой выборъ свѣжаго
товара
**Воротниковъ, мани-
шекъ и манжетъ.**
Единственный
представитель для Ти-
флиса и ихъ окрест-
ностей
по фабричнымъ цѣнамъ
передѣлка въ любой фасонъ безплатно
М. А. КАЛТАГЯНЦА

ՇԱՐՈՒՆԱԿՒՈՒՄ է
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Գրական, քաղաքական, հասարակա-
կան եւ առեւտրա-արդիւնաբերական ան-
կուսակցական օրաթերթի
Առայժմ լոյս է տեսնում երկուշաբթի
օրերը։
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ է ՄԻՆՉԵՒ ՑՈՒՆ. 1Ր.։
Հասցէն՝ Тифлисъ Редакція
газеты «Сурандакъ»

Գաւառական քաղաքներում,
աւաններում և ընթերցասէր գիւ-
ղերում, հարկաւոր են լրագրա-
վաճառ գործակալներ, որոնք
յանձն առնեն «ԽԱԹԱԲԱԼԱՆ»
տարածել, իրենց շրջաններում»։
Պայմանների մասին դիմել Թիֆ-
լիզ, խմբագրութիւն «Խաթաբալայի»։

Թիֆլիզի ՊՕՍՏ-ՀԵՌԱԳՐԱՏԱՆ խնա-
յողական կասսայի բաժանմուն-
քում, բացւած է ընդունե-
լութիւն
**ԸՊԸՀՈՎԸԳՐԵԼՈՒ ԵԿԸՄՈՒՏՆԵՐՆ
ՈՒ ԳՐԸՄԸԳԼՈՒԽՆԵՐԸ**
Պայմանների
մասին դիմել Պօստ-հեռագրա-
տան գործավարութեան գրասենեակը։

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՄԻՆԻՍՏՐ. ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՆ
ՆԵՐՔՈՅ ԳՏՆՈՒՈՂ

## Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆԻ
## ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ

Թիֆլիս, Միքայէլեան պր. №24,4.
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական
առեւտրական կրթութիւն.

Դասընթացքն աւարտողներին տրւում են ատեստատներ։
ԳՈՐԾՆԱԿԱՆ պարապմունքները կատարւում են կուրսերում Լօնդոնի Pifman. և Պարիզի Pigi r զպրոցների ձևով կազմակերպուած Must-r. Comptoir-ում։ Նիւթերն առնւում են ակտիւ կեանքից. Առարկաններն են. ա) պարտադիր. 1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ. գերմ. ֆրան., ամերիկական, բանկային և գործարանական. 2) Առևտրական թւաբանութիւն, 3) Քաղաքատնտեսութիւն, 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն), 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Թւաբանութիւն համրիչի վրայ, 7) Վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենաւաւ ձեռքի ուղղումը), բ) ոչ պարտադիր. 1) օտար լեզուներ, 2) ապագրութիւն, 3) գակտիլոգրաֆիա (ռեմինգտոն և այլ.) և 4) առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով։ Զբաղմունքները կատարւում են և զատ զատ։ Խնդիրների ընդունելութիւնը 10—12 և 4—5 և կէս. ժ.։ Ծրագիրը և կանոններն ուղարկւում
և տրւում են ձրիաբար կուրսերի շէնքում։
Խնդիրների ընդունելութիւնը օգոստոսի 20-ից. սեպտեմբերի 15-ից պարապմունքները։
Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութեան կանդիդատ՝
Տ. ՓԻԼՈՅԵԱՆ

## Ս. և Ա. ՂՈՒԿԱՍԵԱՆՆԵՐԻ



## ՁԿՆԱՎԱՃԱՌԻ ՄԱԳԱԶԻՆԸ

(Պուշկինեան փող. տուն Սունդուկեանի, վրաց սեմինարիայի դիմաց)
Ամէն օր ստացւում է սեփական ձկնարդիւնաբերանից թարմ ձուկ
ՍԵՒՐՈՒԳԱ, ՕՍԷՏՐԻՆ, ԹԱՐԹ
Ունինք մեծ քանակութեամբ թարթի դօշ, Դոնի և տեղական
բալիկ, ճիպա, ցալձվալա, խաւիր և այլ.
ԸՆՏԻՐ ՏԵՍԱԿԻ ՁԿՆԿԻԹ (жидка) ԵՒ ԽԱՒԻԱՐ
Կովկասեան և արտասահմանեան ձկնային կանսերւներ
Գները ամենաչափաւոր

## Ն. Ի. ԲՈԶԱՐՋԵԱՆՑ ԵՒ ՈՐԴ.
ԳՈՐԾԱՐԱՆԸ

ԾԽԱԽՈՏԻ ԲՈԼՈՐ
ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎՐԱՑ
**50% ԵՒ ԱՒԵԼԻ 50%**
ԸՆԿՑԻՋԻ ԸՒԵԼԸՆԸԼՈՒ
և ծխախոտի թանգանալու պատճառով

Իրեն նպատակն է դրել՝ պահել պահպանել առաջւայ պէս արտադրւող պա-
պիրոսների բարձր յատկութիւնը և առանձին ուշադրութիւն դարձնել

| | | | |
|---|---|---|---|
| **Симпатія № 8** | 10 հ. 6 կ. | **Народныя Экономія** | 10 հ. 4 կ. |

Գների այսպիսի աննշան բարձրացումով գործարանը հնարաւորութիւն ունի մշտապէս պահպանել արտադրւող պապիրոսների բարձր յատկութիւնն ու արժանաւորութիւնը, միևնոյն ժամանակ աշխատելով ապագայում լաւացնել նրանց, որպէսզի արդարացնի և ամրացնի այն «ՎՍՏԱՀՈՒԹԻՒՆԸ», որով մեր ֆիրմայի պապիրոսները վայելում էին 50 տարւայ ընթացքում պ.
պ. ապառողների կողմից։
ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ։ Ներկայ յայտարարութիւնով (ոչ թէ ռեկլամ)
**Ն. Ի. ԲՈԶԱՐՋԵԱՆՑ ԵՒ. ՈՐԴ.** գործարանը
ցանկանում է յարգելի հասարակութեան իրազեկ պահել գործերի ներկայ
դրութեան վերաբերմամբ։ Ակցիզ. տոր. մասին կանոնագրքի 940 յօդւածի
հիման վրայ վերոյիշեալ պապիրոսները արգելւում են ծախել էտիկէտների
վրայ նշանակած գներից թանգ։

## Է Ջ Մ Ի Ա Ծ Ն Ի  Ճ Ե Մ Ա Ր Ա Ն Ի  Հ Ա Մ Ա Ր



Հարկաւոր են մի քանի ուսուցիչներ և դաստիարակներ, ցանկացողները թող շտապեն։ (Եւ շտապում են, ով գործ չունի)։

## Կ Ե Ա Ն Ք Ը



Թ ո ռ ն ի կ ը.—Պապի ջան,
դու չես գիտում դրութիւնս,
ես սիրահարուած եմ և այլևս
չեմ կարող ապրել։

## Ա Ն Յ Ա Ր Մ Ա Ր  Դ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն



Տիկին համեցէք խնդրեմ, սեղանը պատրաստ է վաղուց։

## Դ Ե Ր Ա Ս Ա Ն Ն Ե Ր




## Ա Զ Գ Ե Ր Ն Ի Ս  Կ Ը  Լ Ո Ւ Ս Ա Ւ Ո Ր Ւ Ի  Կ Ո Ր...



Ոհ Իշխան յեղափոխական (՞) մտնելով Աղթամարի վանքը, քարուքանդ է անում դարևոր մենաստանը, վեհարանը անառականոց դարձնում և... և ազատ սէր քարոզում Վանայ ազգաբնակութեան։ (Լրագրներից)